«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝	Գոյականի թվի քերականական կարգի ուսուցման արդյունավետության բարձրացումը ժամանակակից մեթոդներով
Առարկա՝	Հայոց լեզու
Հեղինակ՝	Աստղիկ Մարիկյան
Ղեկավար՝	մ.գ.դ., դոցենտ, ՌԲԱ պրոֆեսոր՝ Ա. Մ. Ծատուրյան
Մարզ՝	Լոռի
Ուսումնական հաստատություն՝	Բազումի միջնակարգ դպրոց

Վանաձոր 2022 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն ----------3
2. Գլուխ 1. Գոյականը որպես խոսքի մաս ----------5
3. Գլուխ 2. Գոյականի թիվը ----------9
4. Եզրակացություն ----------16
5. Օգտագործված գրականության ցանկ ----------17

Ներածություն

Հետազոտական աշխատանքի թեման է «Գոյականի թվի քերականական կարգի ուսուցման արդյունավետության բարձրացումը ժամանակակից մեթոդներով»: Հետազոտական աշխատանքը շարադրված է գլուխներով: Այն կազմված է ներածությունից, բովանդակությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Հանրակրթության պետական չափորոշիչը ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է սովորողներին ներկայացվող որակական պահանջները: Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից: սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները նկարագրում են, թե սովորողը ինչ պետք է իմանա, կարողանա անել և հասկանա: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

Թեմայի ուսուցման նպատակն է սովորողների մեջ ձևավորել՝

ա) լեզվական գրագիտություն ու կարողունակություն

Ընդհանուր գրագիտությունը կազմում է սովորելու և լեզվական հաղորդակցության հիմքը, որի հիման վրա կարող են ձևավորվել գրագիտության մյուս ձևերը:

բ) սովորել սովորելու կարողունակություն. սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում:

գ)տարբերակել խոսքի մասերը որպես բառապաշարի իմաստաքերականական խմբեր

դ) խոսքի զարգացում. Իմանալ հոգնակի թվի կազմությունը և նրա հետ կապված հնչյունափոխությունը

ե) խոսքում ճիշտ կիրառել հայոց լեզվի անվանական համակարգի թեքված ձևերը

զ) զարգացնել խոսքի և ուղղագրական հմտությունները

Գոյականի հոգնակի թվի մասին ձեռք բերված գիտելիքները նպաստում են սովորողների խոսքի ճիշտ կառուցմանը, հոգնակի թվի կազմության վերաբերյալ հիմնավոր գիտելիքների տիրապետմանը, դրանք խոսքում գործածելու կարողությանը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ բարձրացնել գոյականի թվի քերականական կարգի ուսուցման արդյունավետությունը՝ կիրառելով ժամանակակից մեթոդներ:

ԳԼՈՒԽ 1

Գոյականը որպես խոսքի մաս

Ուսուցանվող առաջին խոսքի մասը գոյականն է, ուստի ուսուցիչը հենց սկզբից պետք է ուշադրություն դարձնի այն հանգամանքին, որ երեխաները իմանան, թե խոսքի մասերը քանիսն են, թվի դրանք, խմբավորի։ Դրա համար ցուցադրվում է հետևյալ գծապատկերը.



Ներածական այս մասը պետք է ուսուցչից խլի մի քանի րոպե։

Քանի որ աշակերտները 3-րդ դասարանից արդեն ծանոթ են գոյական անվանը, ուստի ուսուցիչը դասը անցկացնում է հարց ու պատասխանի ձևով՝ կիրառելով «Մտագրոհ»։

Գրատախտակին գծում է կլոր շրջան, կենտրոնում գրում գոյական, իսկ աշակերտները, գծելով ճառագայթներ, ավելացնում են առարկա ցույց տվող բառեր։



Հետո էլ փորձում ենք հասկանալ՝ ինչ հարցերի են պատասխանում այդ բառերը։

Պարզվում է՝ ո՞վ, ի՞նչ հարցերին են պատասխանում։

Ուսուցիչը աշակերտներին ասում է, որ թվեն իրենց շրջապատող իրերի անունները։ Ինքը դրանք գրում է գրատախտակին։ Հետո խնդրում է ասել թռչունների, կենդանիների տեսակների անուններ։ Վերջին բառերը գրում է մեկ այլ շարքում։

Աշակերտները թվարկում են երևույթներ, հասկացություններ, անձանց մասնագիտություններ։ Ուսուցիչը կազմում է m-աձև աղյուսակ։

առարկաներ	կենդանի, թռչուն	հասկացություններ
աթոռ	աղավնի	սեր
սեղան	աղվես	ատելություն
գիրք	շուն	ուրախություն
գրիչ	ոչխար	թախիծ
դուռ	արջ	տխրություն

Այնուհետև ասում է , որ այս բառերը բոլորը գոյականներ են և տալիս է գոյականի սահմանումը։

Առարկա ցույց տվող բառերը կոչվում են գոյական անուն կամ գոյական։

Ասում է, որ գոյականը պատասխանում է ո՞վ, ի՞նչ հարցերին։

Այնուհետև դասարանը բաժանում է խմբերի և տալիս է նախապես պատրաստած տեքստը և հանձնարարում է դուրս գրել գոյականները։

Ժողովրդին թվում է , թե այգեպանն ուզում է հեռանալ այգուց, ու գոչում է.

-Կա՛ց, այգեպա՛ն Մոսի, դու մեզ հետ մշակել ես այս անապատը, ամեն մի թիզ հողը ոռոգել ես քո արյունով ու քրտինքով: Մենք ազնիվ աշխատանքով անապատը այգի ենք դարձրել, ուստի հողը մեզ պիտի պատկանի...

Թագավորը,ժողովրդի ահեղ ձայնից սթափված, նայում է այգեպանին, բայց նրա փոխարեն աչքի առաջ ծառանում է մի դարավոր կաղնի՝ արմատներն ամուր թաղած մայր հողի սրտում, ընձյուղները մխրճած երկնքի կապույտի մեջ:

Առաջինն ավարտած խումբը կարդում է գոյականները: Մյուս խմբերը կատարում են լրացումներ, եթե կան սխալներ ուղղում են, ուսուցիչը բացատրում է դրանք:

Ուսուցիչը աշակերտներին բաժանում է քարտեր և հանձնարարում է ընդգծել այն գոյականները, որոնց կարող են շոշափել:

Աթոռ, բժիշկ, բուժում, մուրճ, սեր, հողված, բեռ, գառ, լեռ, եզ, դուռ, մատ, նուռ, ծունկ, թոռ, կուռ, բարություն, ծոռ, ձուկ, հարս, մուկ, գիրք, պայուսակ, ափսե, ատելություն :

Աշակերտները ընդգծում են: Ուսուցիչն ասում է, որ ընդգծվածները թանձրացական գոյականներ են, օրինակ՝ աթոռ, սեղան, գիրք և այլն, իսկ մյուսները՝ վերացական, օրինակ՝ ատելություն, սեր, բարություն և այլն:

Հետո ուսուցիչը ամփոփում է օրվա դասը: Ներկայացնում է գոյականի առանձնահատկությունները:

Միասին կազմում են գոյականի գծապատկերի մի մասը.



Աշակերտները քայլ առ քայլ ներկայացնում են՝ ինչ սովորեցին։

Կատարվում է ուսուցանող գնահատում ։

Տրվում է է տնային հանձնարարություն։

1.Եղ. Չարենցի «Հայենիքում» բանաստեղծությունից դուրս գրել գոյականները։

2. Դուրս գրած գոյականները խմբավորել։

3. Գրել անհասկանալի բառերի բացատրությունը և կազմել նախադասություններ։

ԳԼՈՒԽ 2

Գոյականի թիվը

Գոյականի հոգնակի թվի մասին ձեռք բերված գիտելիքները նպաստում են սովորողների խոսքի ճիշտ կառուցմանը, հոգնակի թվի կազմության վերաբերյալ հիմնավոր գիտելիքների տիրապետմանը, դրանք խոսքում գործածելու կարողությանը:

Մայրենի լեզվի ուսուցման շարունակականության սկզբունքը պայմանավորված է լեզվական մակարդակների հետևողական ուսուցմամբ: Դասավանդման ընթացքում հայոց լեզվի բովանդակությունը, լեզվական մակարդակների աստիճանական յուրացումը սովորողների մեջ մշակում է խոսք կառուցելու, իր խոսքը վերահսկելու, տարբեր իրադրություններում համապատասխան խոսքային վարքագիծ դրսևորելու ունակություն, ինչպես նաև լեզվական համակարգի բոլոր բաժինների վերաբերյալ բավարար և հիմնավոր գիտելիքների ապահովում: Լեզվական առանձին միավորների մասին համակարգված գիտելիքների ուսուցումը նպաստում է նաև սովորողների վերլուծական կարողությունների ձևավորմանը[1]: Ուշագրավ է, որ ժամանակակից լեզվաբանության մեջ առանձնակի տեղ են գրավում խոսքի մասերին վերաբերող գիտական բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնց արդյունքում կարևորվում են ոչ միայն բառերի քերականական փոփոխությունները և դրանց առնչակից թեքվող խոսքի մասերը, այլև նրանց քերականական հատկանիշները: Սովորողների մեջ ձևավորվում է լեզվի ձևաբանական կառուցվածքի և նրա տարրերի մասին գիտելիքներ, որի արդյունքում կարողանում են տարբերակել խոսքի մասերն ըստ նրանց արտահայտած ընդհանուր իմաստների և ըստ քերականական հատկանիշների [2]: Ուսուցման ընթացքում սովորողներին նկատել ենք տալիս այն իրողությունը, որ գոյականը՝ որպես խոսքի մաս, ցույց է տալիս նյութական առարկաներ ընդհանրապես: Գոյականին հատուկ քերականական կարգեր են հատուկ և հասարակ լինելը, որոշյալ և անորոշ առումներ ունենալը, հոլովի և հոլովման քերականական կարգը, թվի քերականական կարգը և այլն:

Նախնական վերլուծության արդյունքում մատնանշում ենք, որ գոյականի թվի քերականական կարգի հատկանիշը առարկաների քանակ մատնանշելն է:

Հետևում է, որ գոյականն ունի երկու թիվ՝ եզակի, որը ցույց է տալիս մեկ առարկա՝ քար, տուն, վանք, դուռ և այլն: Ինչպես նշում է Ս. Աբրահամյանը [3], եզակի գոյականի որոշ կիրառություններում եզակի-հոգնակի հակադրությունը չեզոքանում է, և եզակին կարող է արտահայտել ա) անորոշ հոգնակի, բ) հավաքականության իմաստ: Իսկ հոգնակի թիվը մատնանշում է մեկից ավելի առարկա՝ գրքեր, քաղաքներ, այգիներ և այլն:

Խոսքի մասերը և նրանց քերականական հատկանիշները ուսուցանվում են հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանում: Գոյականի խոսքիմասային հատկանիշների վերաբերյալ հիմնավոր տեսական գիտելիքների և թվի քերականական կարգի, հատկապես հոգնակի թվի կազմության մասին հանգամանալից ուսուցումը ուշադրության կենտրոնում պահելով՝ կարևորում ենք այն հարցադրումը, թե որքանով են կարողանում սովորողները իրենց ձեռք բերած գիտելիքները դարձնել սոցիալական հմտություններ: Ցանկացած դաս արդյունավետ է և ծառայում է իր նպատակին, եթե այն կառուցված է ժամանակակից մեթոդական հնարներով: Ուսուցման ընթացքում դասավանդողը ստեղծում է խնդրահարույց իրավիճակներ, երբ սովորողները իրենք են ինքնուրույն գտնում հարցադրումների պատասխանները և անում հետևություններ: Թեմայի ուսուցման առաջնահերթություններից են սովորողների իմացության աստիճանը պարզելը և կրկնության միջոցով գոյական խոսքի մասի վերաբերյալ նախորդ դասարաններից ստացած գիտելիքները ընդլայնելն ու հարստացնելը [4]:

«Գոյականի թիվը» ենթաթեմային հանրակրթական դպրոցի առարկայական ծրագրով նախատեսվում է չորս դասաժամ:

Առաջին դասաժամին ընդհանուր տեղեկություն է հաղորդվում գոյականի թվի – եր, -ներ վերջավորությունների մասին, ապա *մտագրոհ* մեթոդական հնարանքով ուսուցանվող թեմային առնչակից բառեր թվարկվում ու գաղափարներ արտահայտվում: Ամեն մի սովորող ազատ է արտահայտելու իր տեսակետն ու դիտարկումը:

Բոլոր մոտեցումներն ու գաղափարները գրանցվում են գրատախտակին [5]: Այնուհետև ուսուցիչը գրատախտակին գրել է տալիս երկու շարք գոյականներ՝ միավանկ և բազմավանկ, ապա առաջարկում գրել հոգնակի ձևերը՝ ընդգծելով վերջավորությունները, ինչպես՝

ծառ – ծառեր	սենյակ – սենյակներ
պատ – պատեր	մատյան – մատյաններ
տուն – տներ	անկյուն – անկյուններ
սիրտ – սրտեր	գարուն – գարուններ

Սովորողները նկատում են տարբերությունը, ապա ուսուցչի օգնությամբ սահմանում, որ միավանկ գոյականների հոգնակին կազմվում է –եր, իսկ բազմավանկ գոյականների հոգնակին կազմվում –ներ վերջավորությամբ: Դասագրքի համապատասխան հատվածը սովորողներից մեկը կարդում է, ապա քննարկմամբ ամրապնդում են կանոնը: Հաջորդ քայլը ուսումնական վարժությունների կատարումն է, ինչպես նաև տնային աշխատանքի հանձնարարումը:

Կազմել տրված բառերի հոգնակին.

փունջ –	ժամացույց –
ապա –	նուռ –
ակումբ –	թռչուն –
ձեռագիր –	եղնիկ –

Երկրորդ դասաժամի նպատակը սովորողներին հոգնակի թվի կազմության շեղումների մասին հիմնավոր տեղեկություն հաղորդելն է: Վերը նշված սկզբունքով հանձնարարվում է գրատախտակին գրել գոյականների երեք շարք.

ձուկ-	արոտավայր-	ժամագործ-
մուկ-	դասագիրք -	վիպագիր-
սևահող –	հացատուն-	թոռ-
մեծատուն-		հանքափոր-
բեռ-		

Զրույցի մեթոդով բացատրվում է, որ առաջին շարքի բառերի գրաբարյան վերջնահնչյուն *ն*-ն աշխարհաբարում ընկել է, բայց հոգնակիի կազմության և բառաբարդման ժամանակ վերականգնվում է: Երկրորդ շարքի բառերի հոգնակին կազմվում է –եր վերջավորությամբ, ապա անում հետևություն՝ նշելով, որ այս շարքի բառերը կազմությամբ բարդ են, և վերջին բաղադրիչները՝ միավանկ գոյական, հոգնակին կազմվում է –եր վերջավորությամբ: Երրորդ շարքի բարդ բառերի վերջին բաղադրիչները թեև միավանկ են, բայց պարունակում են գործողության իմաստ, ինչպես՝ վիպագիր նշանակում է վեպ գրող և այլն: Ուսուցանողի առաջադիր խնդիրներից է հոգնակիի կազմության օրինաչափությունից շեղվող այլ բառերի մասին ևս գիտելիքներ հաղորդելը, ինչպես՝

մարդ – մարդիկ	պարոն – պարոնայք
կին – կանայք	անձ – անձինք
տիկին – տիկնայք	ռուս – ռուսներ

Երրորդ դասաժամը. խմբային հետազոտության մեթոդով նախապես հանձնարարելի թեման բաժանվում է ենթաթեմաների և հետազոտող խմբերին հանձնարարվում տրված ժամանակահատվածում կատարել առաջադրանքները: Առանձնացված հատվածների համադրմամբ կազմվում է հետազոտության ընդհանուր պատկերը, որից հետո յուրաքանչյուր խումբ ընտրում է մեկ ելույթ ունեցողի, որի միջոցով պարզում է խմբի անդամների ներգրավվածությունը և հանձնարարված թեմայի յուրացման աստիճանը:

Առաջին խումբը ներկայացնում է այն միավանկ գոյականների խումբը, որոնց գաղտնահնչյուն *ը*-ն երկրորդ վանկում է, և որ այդ բառերի հոգնակին կազմվում է –եր մասնիկով, ինչպես՝

արկղ - արկղեր	տեգր – տեգրեր
կայսր – կայսրեր	սանր – սանրեր
վագր – վագրեր	աստղ – աստղեր
դուստր - դուստրեր	տետր – տետրեր

Երկրորդ խումբը ներկայացնում է այն գոյականների խումբը, որոնց գաղտնահնչյուն *ը*-ն առաջին վանկում է, և կազմվում է –ներ վերջավորությամբ, ինչպես՝

դպրոց -	սփռոց -
մկրատ -	սնդուկ -
վզկապ -	

Երրորդ խումբը ներկայացնում է ժամանակակից հայերենի տեսակետից անք, -ենք,-ոնք, ունք վերջավորություն ունեցող գոյականների խումբ, որոնցից օրինաչափ են –ենք-ով կազմությունները, մինչդեռ ոնք –ով և ունք-ով ձևերը խոսակցական երանգ ունեն և սահմանափակ գործածություն, ինչպես պապոնք, ձերոնք…

Չորրորդ խմբի նպատակն է ներկայացնել գոյականների հոգնակի թվի կազմության առանձնահատկությունները՝ առանձնացնելով երեք խմբեր՝

ա) գոյականներ, որոնք ունեն և՛ եզակի, և՛ հոգնակի թվի ձևեր՝ քաղաք, դաշտ, ծով, գիրք և այլն:

բ) գոյականներ, որոնք ունեն միայն եզակի թվի ձև և հոգնակի թվով սովորաբար չեն գործածվում: Դրանք անհոգնական գոյականներն են՝ կաթ, հաց, խմոր, նավթ և այլն:

գ) գոյականներ, որոնք ունեն միայն հոգնակի թվի ձև և եզակի թվով չեն կարող գործածվել: Դրանք անեզական գոյականներ են՝ Անդեր, Կարպատներ և այլն:

Ըստ անհրաժեշտության սովորողներին ներկայացվում է նաև ժամանակակից հայերենում գոյականների հոգնակի թվի կազմությունը՝ ք մասնիկով, որով կարող են կազմվել –ցի, -եցի, -ացի ածանցով վերջացող բառերը, ինչպես՝ լոռեցի-ք, քաղաքացի –ք, սրանք ունեն նաև զուգահեռ ձևեր –ներ վերջավորությամբ կազմված, որոնք գրական լեզվի համար ավելի կանոնական են, մինչդեռ առաջինները հատուկ են ժողովրդական խոսքին [6]:

Հաջորդ խումբը ներկայացնում է հոգնակի թվի կազմության ժամանակ հնչյունափոխության դեպքերը.

ա. Միավանկ բառերի փակ վանկի ի-ն հոգնակիի կազմության ժամանակ դառնում է ը. գիրք-գրքեր, գին- գներ, սիրտ- սրտեր:

բ. Միավանկ բառերի փակ վանկի ու-ն հոգնակիի կազմության ժամանակ դառնում է ը. դուռ-դռներ, սուր-սրեր, ջուր-ջրեր:

գ. Միավանկ բառերի վերջին ու-ն դառնում է վ. ձու-ձվեր, լու-լվեր:

Չորրորդ դասաժամը թեմայի ամփոփման դաս է, որի ընթացքում ակնհայտ է դառնում, թե սովորողները թեման յուրացնելու ընթացքում ինչ գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ են ձեռք բերում[67]:

Դասարանում ավարտին են հասցնում գոյականի մասին պաստառը, որը կմնա դասարանում և դիդակտիկ նյութ կծառայի նաև գոյականի մյուս թեմաներն անցնելիս:



Որպես տնային առաջադրանք հանձնարարվում է կազմել ծունկ, միտք, այգի, բեռ, հրաձիգ բառերի հոգնակին, ապա հորինել փոքրիկ պատմություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքը շարադրվեց գլուխներով:

Առաջին գլխում ներկայացվեց «Գոյականը որպես խոսքի մաս», իսկ երկրորդ գլխում՝ «Գոյականի թիվը»:

Աշակերտները ամրապնդեցին և խորացրին գոյականի թվի կարգի մասին ունեցած գիտելիքները, բանավոր և գրավոր խոսք կազմելիս կարողացան ճիշտ կիրառել գոյականի թվի քերականական կարգը և արտահայտման միջոցները, զարգացնել խոսքը, կազմել խոսք հոգնակի թվի առանձնահատուկ դեպքերի վերաբերյալ՝ կիրառելով ժամանակակից մեթոդներ, պաստառներ: Խմբային աշխատանքներ կատարելով՝ սովորողների մոտ ձևավորվեց գիտելիքը գործնականում կիրառելու կարողություն, արդյունավետ աշխատելու, միմյանց օգնելու, խրախուսելու, համագործակցելով խնդիրներ լուծելու հմտության ձեռքբերում:

Գոյականի հոգնակի թվի մասին ձեռք բերված գիտելիքները կնպաստեն աշակերտների խոսքի ճիշտ կառուցմանը, հոգնակի թվի կազմության վերաբերյալ հիմնավոր գիտելիքների տիրապետմանը, դրանք խոսքում գործածելու կարողությանը:

Օգտագործված գրականություն

1. Հայոց լեզու և գրականություն: Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների պլան և նյութեր, Երևան, 2006թ., էջ 30
2. Աբրահամյան Ս. Գ., Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969թ., 438 էջ:
3. Աբրահամյան Ս. Գ., Ժամանակակից գրական հայերեն, Երևան, 1981թ., 418 էջ:
4. Եզեկյան Լ., Հայոց լեզու, Երևան, 2007թ., 402 էջ:
5. Խլղաթյան Ֆ., Հայոց լեզու, Երևան, 2006թ., 160 էջ:
6. Մանուկյան Ալ., Խոսքի զարգացումը հայոց լեզվի զարգացման ընթացքում, Երևան, 1969թ., 249 էջ:
7. Սարուխանյան Ս., Միրումյան Մ., Դիլաղաջյան Ն., Փուլային ուսուցման եղանակ, Երևան, 2014թ., 158 էջ:
8. Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1983թ., 432 էջ: